

# 1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

## KEY INDICATORS OF LABOUR MARKET

Սույն բաժնում ներկայացվող տեղեկատվության աղբյուրը տնային տնտեսություններում իրականացված աշխատուժի հետազոտությունն է (ՀՀ-ԱՀ):

Հետազոտության մեթոդաբանության նկարագրությունը՝ **2018թ. իրականացված նշանակալի վերանայումներով**, ներկայացված է սույն ժողովածուի «Աշխատուժի հետազոտության մեթոդաբանությունը» բաժնում (տե՛ս նաև սույն ժողովածուի «Աշխատուժի հետազոտության հիմնական հիմնադրությային շրջանակը» բաժինը):

**Աշխատանքային ռեսուրսները** երկրի աշխատուժի (գրաղվածներ և գործազուրկ բնակչություն) և աշխատուժից դուրս բնակչության (աշխատանք չունեցող և աշխատանք չփնտրող բնակչություն) հանրագումարն է:

Աշխատանքային ռեսուրսների թվաքանակը նույնական է 15-74(75) տարեկան **մշտական բնակչության** թվաքանակի հետ, որը սույն հետազոտության շրջանակում սահմանված է որպես **փաստացի աշխատանքային տարիք**՝ ուսումնասիրվող երևույթների մասշտաբների հնարավորինս ընդգրկման նպատակով (չշփոթե՛լ օրենքով սահմանված աշխատանքային տարիքի հետ՝ 16-62 տարեկան):

Սույն հետազոտության շրջանակում ՀՀ մշտական բնակչության կազմում ներառվում են անձինք, ովքեր հետազոտվող տարվա ընթացքում.

- ՀՀ-ում **մշտապես ներկա են եղել** կամ 3 ամիս (անընդմեջ) և ավելի տևողությամբ ՀՀ-ից դուրս որևէ տեղաշարժ չեն ունեցել.
- **ՀՀ եկել են այլ երկրից**՝ փոխելով իրենց մշտական բնակության երկիրը, առնվազն 12 ամիս փաստացի բնակվել են ՀՀ-ում կամ բնակվել են 12 ամսից պակաս տևողությամբ, սակայն առնվազն 12 ամիս ՀՀ-ում բնակվելու մտադրությամբ.
- **գտնվել են ՀՀ տարածքից դուրս** առնվազն 3 ամիս (անընդմեջ), բայց 12 ամսից պակաս տևողությամբ: Բացառություն են կազմել պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվողները:



The source of information presented in this section is Labour Force Survey (RA-LFS) carried out in private households.

The description of survey methodology with some **major revisions maid in 2018** is presented in the Section “Methodology of the Labour Force Survey” of this handbook. For more details, see

[https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms\\_220535.pdf](https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---dgreports/---stat/documents/publication/wcms_220535.pdf)

(see also the Section “**Basic Conceptual Framework of the Labour Force Survey**” of this handbook).

**Labour resources / Working age population** are the sum of labour force (both employed and unemployed persons) and population outside the labour force (neither in employment nor in unemployment (not having job and not searching for a job)).

The number of labour resources / working age population is similar to the **usual resident population** aged 15-74(75), which in this survey **defined** as an actual working age by the aim to cover a large scale of the phenomena studied by the survey (not to be confused with the legal working age of 16-62 years).

Within the scope of RA-LFS, the resident population of the RA includes persons who during the reference / surveyed year:

- Have been **permanently present in Armenia** or have not moved outside the Armenia for more than 3 months (in a row).
- **Came to Armenia** from another country, changing their country of usual residence other than RA, at the time of the survey lived in Armenia with the elapsed duration for at least 12 months or lived for less than 12 months, but with the intention to reside in Armenia for at least 12 months.
- **Have been abroad** with the duration at least 3 months (continuously), but less than 12 months. Exceptions were those in compulsory military service.